Արձանագրություն N 2
«ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան

07.11.2019թ.
Ժամը՝ 15:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Խաչիկյան
Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Առուշանյան, Գ. Մեհրաբյան, Հ. Ռամազյան, Ա. Գևորգյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Վ.Մեժունց

1. Պարզաբանում տրամադրելու վերաբերյալ

(Ա. Խաչիկյան)

1.1 « **ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/3**» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացվել է հետևյալ հարցադրումը՝

Հարգելի գործընկեր,

Խնդրում ենք տալ պարզաբանում, արդյոք Ձեր կողմից նշված մատակարարման ժամկետը չափաբաժին 1-ով կդրտարկվի որպես համարժեքություն, թե ոչ:

Բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենա
Քանակը՝ 11 հատ

Տեխնիկական մասնագրեր (ՏՄ)	Պահանջվող ՏՄ	Առաջարկվող ՏՄ
Արտադրման տարեթիվը	2019	2019
Թափքի ծավալը, մ3	Ոչ պակաս, քան 7.5	8.8
Հավելյալ սարքավորումը . - Առջևի ծնագութան առկայություն - Ավազաշաղ սարքավորում առկայություն Ջրցան լվացող սարքավորում առկայություն - Միջբազային խոզանակ առկայություն	Հավելյալ սարքավորումը . - Առջևի ծնագութան առկայություն Ավազաշաղ սարքավորում առկայություն Ջրցան լվացող սարքավորում առկայություն - Միջբազային խոզանակ առկայություն	Հավելյալ սարքավորումը . - Առջևի ծնագութան առկայություն Ավազաշաղ սարքավորում առկայություն Ջրցան լվացող սարքավորում առկայություն Միջբազային խոզանակ առկայություն
Քարշակի տեսակ	4x2	4x2
Բնապահպանական ստանդարտ	Euro- 5	Euro- 5
Ավազաշաղացի թափքը, կգ	Ոչ պակաս, քան 7,500	8,000
Ավազաշաղ սարքավորումը	4-9	4-9
Ջրցան-լվացող սարքավորումը	Ոչ պակաս, քան 8.5	8.5
Միջբազային խոզանակը	Ոչ պակաս, քան 2.2	2.3
Ավազե-կոպիճ նյութերի բաշխման խտությունը, գ/մ2	100-400	100-400
Շարժիչի հզորությունը, ձ/ու	Ոչ պակաս, քան 200	240
Վառելիքի տեսակը	Դիզել	Դիզել
Աշխատանքային գոտու լայնությունը, առնվազն, մ Առջևի ծնագութանի թևը	2.3-3	2.5
Երաշխիք տարի/ կմ	2/75,000	2/75,000

Մատակարարման ժամկետ 15.03.2020

1.2 Գնահատող հանձնաժողովն ուսումնասիրելով հարցադրումը ներկայացրել է հետևյալ պարզաբանումը,

Հարգելի մասնակից,

Պատասխան:

Երևանի քաղաքապետարանի կարիքների համար՝ ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/3 ծածկագրով ընթացակարգով պարզաբանում տրամադրելու վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 23-րդ ենթակետի համաձայն՝ Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված թիվ «ԵՔ-ՀԲՄԱՊՁԲ-19/3» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով նախատեսվել է, որ հրավերի վերաբերյալ մասնակցին չի տրամադրվում պարզաբանում, եթե հարցումը վերաբերում է վերջինիս կողմից առաջարկվելիք ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների տեխնիկական բնութագրերի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համարժեքության համապատասխանությանը:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք, որ Ձեր կողմից համարժեքության համապատասխանությանը վերաբերող հարցերը ենթակա չեն պարզաբանման:

Իսկ ինչ վերաբերում է մատակարարման ժամկետը 15.03.2020թ. սահմանելուն, ապա հայտնում ենք, որ տվյալ ընթացակարգի հրավերի գնման ժամանակացույցով սահմանված է, որ բազմաֆունկցիոնալ կոմունալ ճանապարհային մեքենաները պետք է մատակարարվեն «Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 21-րդ օրը» և վերանայման ենթակա չեն՝ ելնելով Ապրանքի օգտագործման նշանակությունից:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ 0:

Հանձնաժողովի Նախագահ՝		Ա. Խաչիկյան
Անդամներ՝		Վ. Առուշանյան
		Գ. Մեհրաբյան
		Հ. Ռամազյան
		Ա. Գևորգյան
Քարտուղար՝		Վ.Մեժունց